Հողերի կատեգորիաների փոփոխումը իրականացվում է հողերի օգտագործման և շահագործման պայմանները իրենց նպատակային նշանակությանը համապատասխանեցնելու նպատակով:

ա) Մինչև համայնքի գլխավոր հատակագծի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց, իսկ հողամասերի օգտագործման (վարձակալության) կամ կառուցապատման մասին պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, հողամասերի նկատմամբ համապատասխան իրավունքներ ունեցող սուբյեկտների նախաձեռնությամբ, հողերի նպատակային նշանակության փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաստատում է համայնքի ավագանին՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

Նպատակային նշանակությունների փոփոխումը այն համայնքներում, որտեղ չկա հաստատված գլխավոր հատակագիծ, սահմանվել է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ:

բ) Գլխավոր հատակագիծը սահմանված կարգով հաստատվելուց հետո համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են բացառապես գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու միջոցով՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման կարգով նախատեսված պահանջներին համապատասխան:

գ) Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման արդյունքում նպատակային նշանակության փոփոխման գործընթացը իրականացվում է 2010թ. հունիսի 1-ի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի N186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի պահանջներին համապատասխան: